

ՐԱՌԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԵՑԱԿԵՏԻՑ

ՄԱՐԼԵՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բառերի կառուցվածքը վերլուծել՝ նշանակում է քննել նրանց բաղադրիչ միավորներն իրենց բազմապիսի փոխհարաբերությունների մեջ: Բաղադրիչ միավորները տվյալ պարագայում բառին անմիջաբար ստորադասվող միավորներն են, այսինքն՝ ձևույթները կամ լեզվի կառուցվածքային տարրերը, որոնք կոչվում են նաև նվազագույն նշաններ:

Համաժամանակյա վերլուծությամբ, սովորաբար, որոշվում են լեզվի մեկ փուլի նվազագույն նշանները՝ նույն համակարգում ունեցած իրենց գործառնությունամբ. պատմական վերլուծությամբ անհրաժեշտ է որոշել լեզվի ո՛չ միայն մեկ, այլև մի քանի փուլերի նվազագույն նշանները՝ ամեն մի փուլում ունեցած իրենց գործառնությամբ, ինչպես և հաշվի առնել առանձին փուլերի միջև գոյություն ունեցող առնչություններն ու տարբերությունները:

Բառերի կառուցվածքը պատմական վերլուծության ենթարկելու սովորությունը մեզանում չկա. բառերի բաղադրիչ միավորներն առայժմ քննվել են կա՛մ համաժամանակյա, կա՛մ ստուգաբանական եղանակով: Պատմական քերականությունը այս երկու եղանակներից միայն մեկով բավարարվել չի կարող, որովհետև համաժամանակյա վերլուծությամբ հնարավոր չէ որոշել թեկուզ մեկ փուլի լեզվական կառուցվածքի գոյացության հանգույցները, իսկ ստուգաբանական վերլուծությամբ՝ ժամանակային հաջորդական փուլերի առանձին համակարգերը ճանաչել: Բացի այս, պատմական քերականության համար համաժամանակյա մեթոդի որոշ ըմբռնումներ մակերեսային են. ասենք՝ համաժամանակյա ըմբռնմամբ գալառ և գլուր բառերը միմյանց հետ կապ չունեցող միավորներ են, իսկ պատմական ըմբռնմամբ՝ դրանք միևնույն բառի ոչ գործունե փոփոխականներ են¹, որոնց իմաստային կապը դեռևս ընդհատված չէ: Նման իրողությունների հաշվառումը օգնում է պարզելու լեզվի մի փուլի առնչության չափը մյուս փուլի հետ: Պատմական քերականությունը, անհրաժեշտորեն, պետք է օգտվի վերլուծության երկու եղանակներից էլ՝ թե՛ համաժամանակյա, թե՛ ստուգաբանական, որպեսզի կարողանա բացահայտել մի կողմից յուրաքանչյուր փուլին բնորոշ համակարգային իրողությունները, մյուս կողմից՝ տարբեր փուլերի միջև եղած հարաբերությունները և լեզվական կառուցվածքի զարգացման ընթացքը:

Պատմական հայեցակետից բառերի կառուցվածքային տարրերը միատեսակ ընթացք չունեն: Կառուցվածքային որոշ տարրեր ժամանակային հաջորդական փուլերում կարող են անփոփոխ պահել իրենց ձևույթային արժեքը, գործառնության ակտիվությունը. այդպիսիք են, օրինակ՝ գա-, տա-, կա-,

¹ Որևէ փուլի համար ոչ գործունե համարում ենք բառային և ձևային այնպիսի փոփոխականները, որոնք դադարած օրինաչափությունների արձատիք են:

լի, աճ, ծիլ, հող, -ուն, -ան, -ային, -ական, -աւոր և այլ հիմնական ու երկրորդական ձևույթները Կառուցվածքային որոշ տարրեր էլ կարող են ենթարկվել բազմապիսի փոփոխությունների՝ ընդլայնել իրենց գործառնություն ունեցողները, սահմանափակել դրանք, ձուլվել այլ ձևույթների՝ առաջ բերելով նոր նվազագույն նշաններ, դադարել իմաստակիր միավորներ լինելուց՝ վերածվել սոսկ ձևական բաղադրիչ տարրերի, անհետանալ լեզվից և այլն: Այսպիսի փոփոխությունները, սովորաբար, տեղի են ունենում ո՛չ միանգամից, այլ դանդաղորեն՝ սկսվելով նշանաթին համակարգի առանձին ոլորտներից: Քրոն-ենք մի երկու իրողություն:

Հնդեվրոպական անվանակերտ -no/-na ածանցը, որ հայերենում արտահայտվում է -ն միավորով, այսինքն բառավերջի ձայնավորի անկամամբ², գրաբարում ներկայանում է հետևյալ կերպ:

1) Անվանակերտ նշանակություն մե.

Բա- բայարմատից, որից գրաբարն ունի՝ բա-մ «խոսում եմ», բա-ս «խոսում ես», բա-յ «խոսում է», կազմում է բա-ն «խոսք» բառը. օրինակ՝ «Ունկն դիբ բանից իմոց»։ «Տացին մեղ բանք ի բերան՝ ցուցանել ձեզ զօգուտն» (ՆՁԲ, I, էջ 431):

Թա- բայարմատից, որից գրաբարն ունի՝ թա-ն-ա-մ «թրջում եմ», թա-ն-ա-ս «թրջում ես», թա-ց-ի «թրջեցի», թա-ց-ե-ր «թրջեցիր», կազմում է թա-ն «թաց ուտելիք, ջրալի կերակուր» բառը. օրինակ՝ «Յտ ծաւայ հաց, և թան ոսպնեայ» (նույն տեղում, էջ 794):

Կեա- բայարմատից, որից գրաբարն ունի՝ կեա-մ «ապրում եմ», կեա-ս «ապրում ես», կե-ց-ի «ապրեցի», կե-ց-ե-ր «ապրեցիր», կազմում է կեա-ն-ք «կենդանություն, գոյություն» բառը. օրինակ՝ «Օրհնեցից զտէր ի կեանս իմ» (նույն տեղում, հ. II, էջ 1080):

Ջերմ «տաք, տաքուկ» բառից, որից գրաբարն ունի՝ ջերմ-իկ «տաքուկ», ջերմ-ային «տաք», ջերմ-ան-ամ և այլն, կազմում է ջերմ-ն «տեխն» բառը. օրինակ՝ «Կալաւ դձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմնն»³:

Այր արմատի աբ- փոփոխակից, որից գրաբարն ունի՝ աբ-ա-հետ, աբ-ու, աբ-ի, կազմում է առ-ն «արու ոչխար» բառը. օրինակ՝ «Ձեղջերուս, և զառինս, և զվարզս» (ՆՁԲ, հ. I, էջ 307):

Սեռ ճշառավիղ, սերունդ, ազգ, ցեղ, տոհմ, տեսակ» բառից կազմում է սեռ-ն «հարազատ, պարզ, հստակ, ջինջ, բուն, անխառն, անկեղծ» բառը. օրինակ՝ «Անապակի և սեռին՝ անխառնի պատահեաց բարեբարութեան» (նույն տեղում, հ. II, էջ 708). «Հայցեմք յիշատակել զմեզ սեռն սիրով ի միտս բարիս» (նույն տեղում):

2) -ն ածանցը մի շարք բառերում, իբրև բաղադրիչ, թեև բաժանելի է, բայց նրա ձևափոխին իմաստը այդ բառերում մթափնված է. օրինակ՝ ձմեռ-ն բառում -ն ածանցի բաժանելի լինելը կարելի է տեսնել, եթե բառը համեմատենք հոգնակի ձմեր-ք ձևի հետ, ինչպես նաև՝ ձմեր-ոց, ձմեր-ային, ձմեր-ատում, ձմեր-ուկ, ձմեր-ե-մ բաղադրությունների հետ, բայց թե -ն միավորը

² Ըստ հնդեվրոպարանությունների վերջին տվյալների՝ բառավերջի ձայնավորների անկամբ տողի է ունեցել հնագույն հայերենի նախադարձը ենթաշրջանում (տե՛ս Դ. Բ. Ժյապկյան, Очерки по истории дописменного периода армянского языка, Ереван, 1967, стр. 331—332):

³ Աւետարան ըստ Մատթէոսի, գլխ. Ը, թիվ 15:

ծմեր- ձևույթի վրա ինչ իմաստ է ավելացնում, գրաբար փուլում արդեն մութ է⁴։ Նույն կերպ է կազմված նաև ամառ-ն, որի -ն բաղադրիչը կարելի է ճանաչել, եթե բառը համեմատենք ամառ-ք, ամառ-ային, ամառ-ա-սուն, ամառ-աստան բաղադրությունների հետ։

-ն ածանցը բաժանելի է նաև՝ ձեռ-ն (հմմտ. ձեռ-ք, ձեռ-բ-ա-սուն, ձեռ-բ-աղատ, ձեռ-բ-ա-կալ), ոտ-ն (հմմտ. ոտ-ք), ծունկ-ն (հմմտ. ծունկ, ծնկ-ի-մ, ծնկ-ան-ա-մ), ալ-ն (հմմտ. առ-ակ), կառափ-ն (հմմտ. կառափ-ի, կառափ-ե-մ), ցուռ-ն (հմմտ. դուռ-ք, դր-աց-ի, դր-անդ-ի) և այլ բառերում։

3) Բազմաթիվ բառերում -ն ածանցը բաժանելի չէ, բայց իմաստային մի դաշտի մեջ մտնող բառերի նույնանման կազմություններ, ինչպես նաև այդ դաշտի որոշ բառերի բաղադրիչ միավորների բաժանելիություններ՝ իբրև բաղադրիչ ցրտակցվում է. օրինակ՝

Մ արմնի վերաբերող բառերում⁵—բուռն, ուլն, թէկն, մուկն, ունկն, մատն, շուրթն, ունգն, արմուկն, եղունգն, փայծաղն, պճեղն, քիտոն, կաթն, իսկ ծունկն, ալն, ձեռն, ոտն, կառափն բառերում, ինչպես վերը տեսանք, -ն բաղադրիչը բաժանելի է։ Որոշ բառերում -ն-ն կարող է դրվել կամ չդրվել. կնճիռն||կնճիռ, տուտն||տուտ։

Բ ուսանուններում—նուռն, ոսպն, ոլոռն, սիսեռն, եղէգն, ճղեմն, ստեղն. -ն-ն բաժանելի է կառն բառում (հմմտ. կառ-ա-բոյս). -ն-ն կարող է դրվել կամ չդրվել արմն||արմ, սունկն||սունկ, կոտիմն||կոտիմ, ճիւն||ճիւ բառերում։

Կ ե ն դ ա ն ի ն ե թ ը շ ո ղ ը բ ա ռ ե թ ու մ—գառն, խաշն, եզն, եղն, ձուկն, որդն, մուկն, ճպուռն, ծիծառն, թիթեռն. առն բառում -ն-ն բաժանելի է (հմմտ. առ-ու)։

Ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն ի թ ե թ ը շ ո ղ ը բ ա ռ ե թ ու մ—ասեղն, լիսեռն, թիթեղն, ուռն, ազբն, դոխն, բեռն, տոռն, կամն, խուփն. պոյան բառում -ն-ն բաժանելի է (հմմտ. պուտ-ուկ, պոյտ)։

Այս կարգի բաղադրություններից նրանք, որոնք ձևականորեն անբաժանելի են, այսինքն՝ որոնց արմատներն առանց -ն միավորի նշանային որևէ ոլորտում չեն գործառնում, համաժամանակյա վերլուծության դեպքում կհամարվեն նըվազագույն նշաններ, բայց պատմական վերլուծության մեջ անհրաժեշտ է հաշվի առնել լեզվի տվյալ փուլում պահպանված թեկուզ չնչին կապը նախորդ փուլի հետ. այս պարագայում կապը արտահայտվում է բառերի իմաստային խմբերի միջոցով, որոնց որոշ անդամներ կազմված են նույն եղանակով՝ արմատ+-ն ածանց։

4) Կան բառեր, որոնց մեջ -ն ածանցը ո՛չ միայն իբրև բաղադրիչ բաժանելի չէ, այլև որևէ կերպ չի գիտակցվում. օրինակ՝ լայն (= *լա-յ-ն < pla-t-no), գին (= *գի-ն < ues-no), քուռ (= *քու-ն < swop-no), քէն (= *քէ-ն < kweil-na), մուռ (= *մու-ն < mus-no) և այլն։ Այս կարգի բառերում, ինչպես տեսնում ենք, տեղի է ունեցել բաղադրության կատարյալ մթագնում, և գրաբար փուլում սրանք նվազագույն նշաններ են։ -ն ածանցի այսպիսի

4 -ն ածանցը, ինչպես և նրա -ու ն փոփոխակը երբևէ ունեցել են ժամանակի գաղափար արտահայտող գոյականակերտ նշանակություն (տե՛ս Գ. Բ. Զ ա հ ու կ յ ա ն, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 256)։

5 -ն ածանցի այս նշանակության մասին տե՛ս նշվ. աշխ., էջ 255։

ձուլումը հրեաների արմատների հետ մեծ մասամբ տեղի է ունեցել ձայնավորներից հետո⁶,

–ն ածանցի նշանակության կորստին սկսում է հետևել նրա հնչյունային անկման պատմական պրոցեսը հոբաղաձայնային դիրքում։ Այս պրոցեսի սկիզբը կարելի է տեսնել հենց գրաբարում՝ մի քանի բառերի ուղղական զուգակերպի գոյություն մեջ (հմմտ. արմն||արմ, սունկն||սունկ, սառն||սառ, կողմն||կողմ)։ –ն ածանցի անկման պրոցեսը գնալով խորանում է, ընդգրկում գրեթե բոլոր այն ուրոտները, որտեղ բառավերջում բաղաձայնին հաջորդում է –ն։ Այս պրոցեսը միջին հայերենում չի հասնում իր ավարտին։ միջին հայերենը ավանդում է գրաբարում չվկայված բառեր, որոնք –ն ածանցը կամ հոբաղաձայնային –ն հնչյունը պահում են։ օրինակ՝

Բողջն զգունդ (հմմտ. բողջ պալար, բղջ–ուն պալարոտ)։ Ձաղցած դեղերտ քիչ քիչ ի ներս լից և խառնէ ճիճն, որ բողջն չլինի՝ ինչվի կապի⁷։ Գերբն ճշնոց, սրբիչ։ Յն կատուն յետ այնորիկ եղև գերբն և անկաւ ի յալուրտուն (ՀԱԳ, էջ 325)։

Մառն զմուշ, խավար (հմմտ. մառ–ել ճհանգնել, մա–յլ զմուշ, մը–թընչիղ)։ Մածկեցաւ մառամբ քաղաքն ամենայն (ՆՃԲ, հ. II, էջ 210)։

Ճինն ճհաճախ, ստեպ, արագ, սերտ–սերտ։ Այսպիսեացն ուտելն սակաւ սակաւ լինի և ճինն⁸։ Ճառնէ ճինն, որ բողջն չլինի⁹։ ...իւր տէրն ճինն հայի ի յինքն¹⁰։

Յեղմն զմեղմ։ Յոյժ միամորթեցի, և զմիամորթեալն եդի ի վերայ նըժ–վաղ հրոյն և աղնձեցի յեղմն¹¹։

Այս բառը վկայված է նաև յեղմ ձևով՝ Յն ասեմ յեղմ ձայնիւ։ Յեղմ կերիցես¹²։

Գրաբարից ավանդված բառերի –ն ածանցը կամ –ն հնչյունը միջին հայերենում մերթ երևում է, մերթ՝ ոչ։ անգամ նույն բառը հրեան հանդես է գալիս –ն–ով, հրեան՝ առանց –ն–ի։ Օրինակներ՝

Ջերմն ճտենդ, հիվանդություն։ Ձայս ջերմնս հոռոմն անուանէ կըտիկոն (ՂՀՀ, էջ 157)։

Ջերմ ճիսկ այս ջերմս որ ընծայի ի խիստ ցրտոյ, ցամաքեցնէ զմարմինն¹³։

Քռն ճվայ ինձ, բարէկամք իմ, զի թէ հարուր քռն լինի յերանաց իմոց, զծանդրութիւն բեռանցն ոչ թեթևացուցանեն ի թիկնաց իմոյ (ՀԱԳ, էջ 328)։

Քռն ճիշուն աւետիս մատուցին, թէ ցնծայ և ուրախ լեր և տուր մեղ ոժիտ, գի քռն ծնավ քեզ (Նույն տեղում)։

⁶ Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 254։

⁷ J. Karst, Wörterbuch des Mittelarmerischen (ձեռագիր բառարան), Մատենադարանի արխիվ, Թղթ. № 249, վավ. № 7։

⁸ Ն. Բյուրաշեան, Բաղդիթ ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ–ԺԷ դարուց (ձեռագիր մեկնութեան), Մատենադարանի արխիվ, Թղթ. № 235 III, վավ. № 258 Ե։

⁹ Մատենադարանի արխիվ, Թղթ. № 252, վավ. № 20գ։

¹⁰ Վերջ վաստակոց, Վենետիկ, 1877, էջ 1։

¹¹ Մատենադարանի արխիվ, Թղթ. № 235 III, վավ. № 258բ։

¹² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, էջ 1282։

¹³ Մխիթար Հեթումի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832, էջ 10։

Մատն ճեփ զմատնդ ի վերայ երկին դնես՝ նա թվենայ թէ մատնդ ի քար
հասավ կամ ի յանշարժ իրք» (ՂՀՀ, էջ 143):

Անո (<ձեռն) թեւ երբ զձեռդ տանիս վիզն եւ անձն թաց թաց, լաւ նշան էս
(նույն տեղում, էջ 145)։ Թեւ երբ զձեռդ տանիս ի վիզն... նա գէշ լինի» (նույն
տեղում)։

Ձուկն ճօալն և աղուէսն եղեն եղբարք և գնացին որսալ ձուկն» (ՀԱԳ,
էջ 326)։

Դառ (<դառն) «Դառ մի ցանկալի կար ի փարախ մի» (նույն տեղում,
էջ 322)։

Հաբս (<հարսն) ճնոր հաբս մի եղև խոնարհ և համբերող» (նույն տե-
ղում, էջ 325)։

-Ն ածանցի, ինչպես և -ն հնչյունի անկման պրոցեսն իր ավարտին հաս-
նում է ժամանակակից հայերենի գրական երկու տարբերակներում և բարբառ-
ների մեծ մասում։ Որոշ բարբառներ ա՛յն պահում են՝ որ բացարձակ ընդգրկ-
ւումը (Ղարաբաղ, Ագուլիս, Մեղրի, Կարճևան և այլն)։

-Ն ածանցի կամ -ն հնչյունի անկումն արդի հայերենում արտահայտ-
վում է բառերի ուղիղ ձևերում նրա հանդես չգալով, ինչպես՝ ամառ (<ամառն),
ձմեռ (<ձմեռն), լեռ (<լեռան), ձուկ (<ձուկն), մուկ (<մուկն), անձ (<անձն),
թոռ (<թոռն), հարս (<հարսն), մաս (<մասն), մատ (<մատն) և այլն։ Բայց
և այնպես -ն-ն արդի գրական լեզվից իսպառ չի ջնջվել։ Իբրև ձևական բաղա-
դրիչ երևան է գալիս՝

ա) Բ ա ո ա կ ա զ մ ու թ յ ա ն մ ե ջ (ինչպես գրաբարից եկող բառե-
րում, նույնպես և նորակազմ բաղադրություններում)՝ դո-ն-ա-պան, մատ-
ն-ա-չափ, մատ-ն-իշ, ձկ-ն-ապուր, ձկ-ն-կիթ, մաս-ն-ա-վոր, մաս-ն-ա-ճյուղ,
մաս-ն-ա-գետ, լեռ-ն-ա-գործ, լեռ-ն-ա-կածան, անձ-ն-ա-սեր, թոռ-ն-իկ
և այլն։

բ) Հ ո գ ն ա կ ի կ ա զ մ ե լ ի ս՝ դո-ն-եր, մկ-ն-եր, ձկ-ն-եր, լեռ-ն-եր,
թոռ-ն-եր, հարս-ն-եր և այլն։ Գրական լեզվում որոշ բառեր այս կիրառու-
թյան մեջ արդեն կորցրել են -ն տարրը, ինչպես՝ մատ-եր, մաս-եր, անձ-եր։

գ) Մ ի ք ա ն ի բ ա ո ե ռ ի ու ղ ի ղ ձ ե ե ռ ու մ (իբրև արդյունք
գրաբարի ազդեցության, ինչպես և լեզվի զարգացման բնական ընթացքի մեջ
պահպանված)՝ Վահագն, դուցազն, եղեռն, ընդհակառակն, հյուսն, խուռն-
խառն||խառը||խառ, սառն||սառը||սառ, դառն||դառը||դառ, խորն||խորը||խոր-
վերջին եռյակից գրաբար մատենագրության մեջ վկայվել է միայն խուռ ձևը,
բայց արդի հայերենում խորն||խորը փոփոխականների գոյությունն ապացույց
է, որ գրաբար մատենագրությունից *խուռն ձևը պատահաբար է դուրս մնա-
ցել։

դ) -Ն բաղադրիչը լիովին մթագնված ձուլվել է -ան հոլովիչի մեջ, ինչ-
պես՝ դուռ—դռ-ան(=դռ-ա-ն), ձուկ—ձկ-ան(=ձկ-ա-ն), ձմեռ—ձմռ-ան(=
ձմռ-ա-ն), ամառ—ամռ-ան(=ամռ-ա-ն) և այլն։

Ահա այս է մնացել երբեմնի գործուն -ն ածանցից։

Ինչ վերաբերում է գրաբարի բա-ն, քա-ն բաղադրություններին, ապա
սրանք արդի հայերենում նվազագույն նշաններ են, քանի որ նրանց բա-, քա-
արմատներն արդեն ձևակերպարժեք չունեն։ Ներկայումս -ն ածանցը բան, քան
բառերում չի գիտակցվում այնպես, ինչպես գրաբար փուլում չէր գիտակցվում
գին, ֆուն, ֆէն, մուն, լայն բառերում։

Վերցնենք մի ուրիշ միավոր.

Հնդեվրոպական -ro/-ra/-ri, ինչպես և -er ածանցները հայերենում արտահայտվում են -r նշանով¹⁴, որը գրաբար փոխում ներկայանում է հետևյալ կերպ.

1) Ա ն վ ա ն ա կ ե ռ տ ն շ ա ն ա կ ու թ յ ա մ բ .

Լի լեցուն, ամբողջ, առատ բառի հետ՝ լի-ր, արտահայտում է ճամբողջություն, լրիվություն» իմաստը. օրինակ՝ «Ոչ եթէ մասամբ ինչ ետուն զանձինս իւրեանց տեառն, այլ ամենայն լրիւ» (ՆՂԲ, հ. I, էջ 888). «Քառասնիցս երեք» լիւ. ըսկիզբն, և մեջ, և վախճան» (նույն տեղում):

Լու-ա-յ լսեցի», լու-ա-ր, լու-ա-ւ, հ-լու, լու ի լու բաղադրությունների լու արմատի հետ՝ լու-ր, արտահայտում է լսողություն, ունկնդրություն, համբավ» իմաստը. օրինակ՝ «Աստուած՝ որ ամենայնիւ լոյս է, ամենայնիւ լուր է» (նույն տեղում, էջ 903). «Ի լուր ունկան լուան ինձ» (նույն տեղում). «Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն ասորւոց». «Լուաւ Հերովդէս զլուր Յիսուսի» (նույն տեղում):

Դ(ի)-ն-ե-մ՝ «դնում եմ», դ(ի)-ն-ե-ս, ե-դի «դրեցի» բայաձևերի դի-արմատի հետ՝ դի-ր(-ք). արտահայտում է գործություն, վիճակ» իմաստը. օրինակ՝ «Դիւր ի դրախտին» (նույն տեղում, էջ 677). «Իսկ զբազմութիւն այգեստանոյ իբր զարտեանաց խիտ և գեղեցիկ ծիր, որոյ հիւսիսային կողմանն դիւր կարակնաձև արդարև գեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ»¹⁵,

Ե-տու չտվեցի», տու-աք չտվեցինք», արարչա-տու կազմություններում հանգես եկող տու- արմատի հետ՝ տու-ր(-ք), արտահայտում է ատվություն, տալու բան» իմաստը. «Ամենայն տուր բարի» (ՆՂԲ, հ. II, էջ 792). «Արասցես զտուրսն՝ զոր խոստացար բերանով քով» (նույն տեղում). «Մի՛ տրտմիցիս ի սրտի քում զկնի տրոցն քոց նմա» (նույն տեղում):

Ո բառից, որով կազմված են նաև՝ ու-մն, ու-ք, կազմում է ու-ր «նա որ, այն որ». «Քաղցր է տէր՝ ուրոց սպասեն նմա» (նույն տեղում, էջ 526). «Լցէ՛ք ջուրսդ, որ ի ծովս» (նույն տեղում). «Ուր զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ. իսկ ուր գիտէ զմահ՝ ոչ երկնչի ի նմանչ»¹⁶,

Ի-ք, զ-ի, ի-մն, ի-ն-չ բաղադրությունների ի- արմատով կազմում է ի-ր բառը, որ նշանակում է մի բան, իր, գործ». «Արարից ես իւրս մի» (ՆՂԲ, հ. II, էջ 870). «Յամենայն իրաց շարաց ի բաց կացէք» (նույն տեղում). «Եւ իսկ ուր գիտէ զմահ՝ ոչ երկնչի ի նմանչ»¹⁶,

2) Մ ա կ բ ա յ ա կ ե ռ տ ն շ ա ն ա կ ու թ յ ա մ բ .

Յամ առւշ» բառից կազմում է յամ-ր «դանդաղ, դանդաղորեն» բառը. «Ոչ յամեցուցէ տէր զաւետիսն, որպէս ոմանք յամր համարին» (ՆՂԲ, հ. II, էջ 319). «Կէսքն (յաստեղաց) յամրագնացք, և կէսքն արագագնացք» (նույն տեղում):

Այս բառից կազմում է այս-ր «դեպի այստեղ, այս կողմ» բառը. «Մատուցէք այսր զամենայն ազգս Իսրայէլի» (նույն տեղում, հ. I, էջ 95):

14 Հմմտ. Հ. Ա ճ ա ո յ ա ն, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, հ. 3, էջ 110.

15 «Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1913, գիրք II, գլ. ԽԲ.

16 «Ծղիշէի վարդապետի վասն վարդանայ և հայոց պատերազմին», Վենետիկ, 1852, էջ 25.

17 «Փաւստոսի Բուղանդացոյ Պատմութիւն հայոց», Վենետիկ, 1914, դպր. 6, գլ. Ը.

Այդ բառից կազմում է ալդ-ր ալա վայրում, ալստեղ՝ բառը. «նստարութ ւորք ալդր» (նույն տեղում, էջ 81):

Անդ «ալն վայրում» բառից կազմում է անդ-ր «դեպի ալն կողմ, ալն-տեղ, մի կողմ» բառը. «Երթիցուք մինչ ցանդր» (նույն տեղում, էջ 135). «Յիշէին անդր նախարար զոմն» (նույն տեղում):

3) Կան բառեր, որոնց մեջ -ր ածանցը ձևավել է արմատին և ալլեւ չի պիտակցվում. օրինակ՝ ոսկր (= *ոսկ-ր < ostw-er), լար (= *լա-ր < wla-ro), սուր (= *սա-ր < k'o-ro), նոր (= *նո-ր < nev-er), կոր (= *կո-ր < go-ro), սէր (= *սէ-ր < kei-ro), ուր (= *ու-ր < k'u-er) և այլն:

Միջին հայերենը -ր մասնիկով նոր բաղադրություններ չի վկայում. այս փուլում -ր-ն արդեն բոլորովին զրկված է բառակազմական գործառնություններից, բայց հնուց ավանդված մի քանի բառերում շարունակում է գիտակցվել իբրև բաղադրիչ տարր. օրինակ՝ լի-ր (հմմտ. լի, լի-ց, լե-ց-ուն), տու-ր/-ք/ (հմմտ. բերք-ա-տու), լու-ր (հմմտ. հ-լու) և այլն:

Այս կարգի հակադրություններ պահպանում է նաև արդի հայերենը, ինչպես՝ լի-ա-լի-ր «առատ», բերան-ա-լի-ր «լիաբերան» և լի-ություն. ան-լու-ր «չլսված» և հ-լու լսող, հնազանդ». ծուն-ր, ծն-ր-ա-դիր և ծուն-կ. մեծ-ա-դի-ր, բարձր-ա-դի-ր և դ(ի)-ն-ել, բն-ա-տու-ր և կեն-ս-ա-տու և այլն:

Այսպիսի բաղադրությունները թե՛ միջին, թե՛ արդի հայերենում դադարած, մեռած օրինաչափությունների հետքեր են, որոնք մեր լեզվի մեջ կարող են դեռ երկար տևել:

Այս առումով հետաքրքրական է հնդեվրոպական -mo ածանցը, որը հայերենում արտահայտվում է -մ միավորով¹⁸ և արդեն զրաբար փուլում ունի նվազագույն հաճախականություն: Գրաբարում -մ ածանցի ձևերը ալիս նշանակությունը ավելի մթազնված է, քան -ն, -ր ածանցներինը: Պատկերը հետևյալն է.

1. -Մ ածանց ունեցող բառերը նույնարմատ ալլ բառերից համեմատաբար հեշտ են տարբերակվում բառիմաստի մոտիկության դեպքում. օրինակ՝

Ջեր-մ, հմմտ. ջեր-ին, ջեր-ան-իմ, ջեր-ի-մ, — արմատն է ջեր-:

Կող-մ, հմմտ. կող, կող-մն, — արմատն է կող:

Ան-դ-գա-մ, հմմտ. դ-գա-յ-ուն, — արմատն է գա-:

Թուր-մ «թաց», հմմտ. թուր-ջ «թրջոց», — հիմքն է թու-ր, իսկ արմատը՝ թու-ր/թա-, որ կարելի է տեսնել թու-ք, թա-նա-մ, թա-ց բաղադրություններում.

Ճիզ-մ «մատաղ բույս», հմմտ. ճիզ կամ ճիւղ «ոտս»:

Յար-մ-ար, հմմտ. յար «կից, հարմար»:

2. Բառիմաստի նկատելի հեռացման պատճառով, իբրև նույն արմատի ածանցյալ ձևեր, ավելի դժվար են տարբերակվում՝

Կա-մ(-ք) և կա-յ-ուն, կա-յ-ան:

Մեղ-մ «փափուկ» և մեղ-կ-ե-մ «թուլացնել»:

3. Բառիմաստի փոփոխության պատճառով, իբրև նույն արմատի ածանցյալ ձևեր, ալլև չեն տարբերակվում՝

Աւմ «արմատ» (= *ար-մ) և աւ-ի՝ «վեր կաց», յ-աւ-ե-այ «բարձրացա»:

¹⁸ Հմմտ. Ն. Ա ճ ա ո յ ա ն, նշվ. աշխ., էջ 109—110:

Թաւմ (= *թար-մ), վկայված միջին հայերենում, բայց կազմութեամբ հնագույն, և թոռ-ն:

—Մ ածանցը, ինչպես տեսնում ենք, գրաբարում ակտիվութունից զուրկ է, բայց նրա հետքերը մինչև օրս հարատեւում են, շնայած որ անցել են 15 երկար ու ձիգ դարեր: Արդի հայերենում կարելի է տարբերակել հետեւյալ կազմութունները՝ ջեր-մ-ոց, ջեր-մ-ա-չափ և ջեր-ոց, ջեր-ա-չափ, Կող-մ և կող-ք, կող-եր: Ան-զգա-մ և զգա-լ, զգա-յ-ուն: Կա-մ-ք և կա-յ-ուն և այլն:

Մենք քննեցինք այնպիսի միավորներ, որոնք լեզվի զարգացման ընթացքում հետզհետեւ կորցրել են իրենց նշանակութունը, դարձել ձևական միավորներ, զրկվել ակտիվութունից: Բայց նվազագույն նշաններին հատուկ է փոփոխութունների ո՛չ միայն այսպիսի, այլև հակառակ ընթացք, երբ թույլ գործառնութեամբ միավորները աստիճանաբար զորեղանում, ընդլայնում են իրենց գործառնութեան ոլորտները և սկսում կարևոր գեր խաղալ լեզվի այս կամ այն փուլի համակարգում: Այսպիսին են, օրինակ՝ —եաւ, —անի ածանցները, որոնք հին հայերենում աննշան դեր ունեին և մի քանի բառերի վրա դրվելով՝ նրանց տալիս էին հավաքականութեան իմաստ, իսկ միջին հայերենում՝ —ֆ հոգնակերտի գործառնութեան սահմանափակմանը զուգընթաց՝ ըսկըսեցին տարածվել և հանդես գալ իբրև հիմնական հոգնակերտ մասնիկներ (—եւ, —նի||—անի արտահայտութեամբ):

Բ ա ղ ա դ ր ու թ յ ա ն մ թ ա դ ն ու մ բ . — —ն, —ր ձևույթները քննելիս մենք տեսանք, որ գրաբար փուլում, երբ դեռ այս ածանցները գործառնութուն ունեին, մի շարք բառերում արդեն չէին գիտակցվում իբրև բաղադրիչ միավորներ, այլ ձուլվել էին արմատներին, որոնց հետ միասնաբար ընկալվում էին իբրև նվազագույն նշաններ (հիշենք՝ լայն, գին, քուն, մուն, ոսկր, լար, սուր, նոր, սէր և այլն):

Արդ, ի՞նչ պայմաններում է տեղի ունենում բաղադրիչների այսպիսի ձուլումը. քննենք մի քանի իրողութուն.

1. Արմատ + ածանց բաղադրութունը մթագնվում և նվազագույն նշանի է վերածվում, երբ նրա կազմի մեջ մտնող հիմնական ձևույթը լեզվի այս կամ այն փուլում դադարում է իբրև ձևույթ գործառնելուց. այդպիսին են, օրինակ՝ *լա-, *գի-, *քու-, *թէ-, *մու-, *ոս-, *սու-, *նո-, *սէ- միավորները գրաբար փուլում կամ բա-, թա- միավորները արդի փուլում: Նման պարագայում բաղադրութեան մթագնման համար կարևոր չէ նրա երկրորդական ձևույթի գործառնութունից զրկված լինելը. վերջինս մեռած արմատի մոտ թեև ճանաչելի չի լինում, բայց նշանային որևէ այլ ոլորտում կարող է գիտակցվել. օրինակ՝

—Եան միավորը գրաբարում գործուն ածանց է, որ կարելի է նկատել հոմ-եան և հոմ-անի, հաւիտ-եան և հաւէտ, բուր-եան և բուր-աւետ զույգերի համեմատութունից, բայց առեան բառում այն չի գիտակցվում, որովհետև գրտնրվում է գործառնութունից զրկված, մթագնված, մեռած *աւ-($\leq$ est) արմատի մոտ¹⁹:

—Ին միավորը ($\leq$ հնդեր. —ino ածանցից) գրաբարում գործուն է, որ երեւում է գիշ-ին և գիշ-ային, ջեր-ին և ջեր-ային, բիր-ին և բիր-աւոր, արտա-

¹⁹ Թուրքաբանական վերլուծութունները կատարված են 2. 2. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» և Գ. Բ. Զահուկյանի «Հին հայերենի հոլովման սխեման» և նրա ծագումը» աշխատութունների տվյալների հիման վրա:

ք-ին և արտաք-ոյ, լուս-ին և լուս-աւոր զույգերի համեմատութիւնից, բայց դարբին, մարմին բառերում այն չի գիտակցվում՝ գործառնութիւնից զրկված *դարբ- (< dhabr), *մարմ- (< mṛm) արմատների մոտ:

-ի միավորը (< հնդեր.-yo ածանցից) գրաբարում ակտիվ գործածութիւնն աւելի ալի կարելի է տեսնել աղ-ի և աղ, ար-ի և այր, ձր-ի և ձիր, մու-ի և մու, աստ-ի «հաստատուն» և ասա-ել «հաստատել» զույգերի համեմատութիւն միջոցով, բայց ուրդի (< por-ti-yo), ալի (< pl-yo), քեհի (< sven-yo), ուղի (< og'hin-lo) բառերում այն բոլորովին չի գիտակցվում:

-Մն ածանցի գործառնութիւնը երևում է սեր-մն և սեր-ել, կող-մն և կող, շեր-մն և շեր-իմ, ո-մն և ո զույգերի համեմատութիւնից, բայց նույն -մն ածանցը չի գիտակցվում ատամն (< dn-mn < ed արմատից), գեղմն (< vel-mn) բառերում:

-եղ ածանցի գործուն լինելը կարելի է նկատել ուժ-եղ և ոյժ, ահ-եղ և ահ, շք-եղ և շուք, զօր-եղ և զօր-ութիւն զույգերը համեմատելով, բայց ասեղ-ն բառի ասեղ- միավորի մեջ այն չի գիտակցվում՝ գործառնութիւնը կորցրած *աս- (< ak' «սուր») արմատի մոտ:

Առ- նախամասնիկն, իբրև բաղադրիչ, գիտակցվում է առ-աջ և աջ, առ-ողջ և ողջ, առ-աք-եմ և աք (ընդ աք տանիմ), առ-ակ և ակ-ն զույգերի համեմատութիւն մեջ, բայց առաստաղ (= *առ-ա-ստաղ < stel «դնել, զետեղել, բարձրացնել, կանգնեցնել»), առասպել (= *առ-ա-սպել < spel «խոսել, պատմել») բառերում՝ մեռած -*ստաղ, -*սպել արմատների մոտ, չի գիտակցվում:

Նման պարագայում երբեմնի արմատը անբաժանելիորեն ձուլվում է երկրորդական բաղադրիչին, որի հետ միասնաբար ընկալվում է որպէս նվազագույն նշան: Այսպիսի նշաններ են՝ ատեան, դարբին, մարմին, ատամն, գեղմն, ասեղ, առաստաղ, առասպել, ուրդի, ալի, քեհի, ողնի և այլն:

2. Արմատ-ածանց բաղադրութիւնն իբրև նվազագույն նշան է ընկալվում, երբ նրա արմատական ձևովքը այս կամ այն ձևովքային ոլորտում հանդես է գալիս ո՛չ այն իմաստով, որով գործառնվում է լեզվի տվյալ համակարգում, այլ այնպիսի իմաստով, որով այլևս չի գործառնվում: Այս դեպքում արմատի երկու իմաստների միջև խզվում է կապը, և շարժառնվող իմաստով արմատը զրկվում է ձևովքի արժեքից: Վերջինիս կից ածանցը, լինի գործուն թե ոչ գործուն, դադարում է իբրև բաղադրիչ գիտակցվելուց, քանի որ գտնւ-վում է արժեքազրկված ձևովքի ոլորտում: Գրաբարում այս ճանապարհով առաջ եկած նվազագույն նշաններ են, օրինակ՝ արծաթ, արդ, մարդ, կարթ, դեղձ, որոնց ձևովքի արժեքից զրկված երբեմնի արմատները այլ իմաստներով կենդանի են նույն համակարգում (հմտ. արծ-արծ-եմ, ար-ար-իչ, մեռ-ան-իմ, կոր-ան-ամ, դեղ-ին կամ դեղ-բ կամ դալ-ուկ-ն և այլն): Նույնպիսի հարաբերութիւն կարելի է տեսնել միջին հայերենի՝ խմոր և խում, ցերեկ և երեկո կամ իրիկու(ն), ցուր «մինչև» և ուր, առեղ և եղ(-ն-իմ) կամ էլ (-ն-իմ), արդի հայերենի՝ զգաստ և գա(-ւ), զարմ և արմ(-ան-ալ), զբաղ և բաղ(-դատ-ել), զիջ(-ել) և էջ միավորների միջև:

3. Բաղադրութիւնը մթազնվում և նվազագույն նշանի է վերածվում նաև բաղադրիչ միավորների հնչյունափոխութեամբ և ձուլմամբ: Այս երևույթը հատկապէս բնորոշ է միջին հայերենին հանգեցնող լեզվական փոփոխութիւնների շրջանին, թեև նման կարգի փաստեր կան նաև գրաբարում. օրի-

նակ՝ տէր(=տի+այր), այժմ(=այս+ժամ), միւս(=մի+ւս), միխթար(=մի'+խիթար) և այլն:

Միջին հայերենը վկայում է՝ ղորդ||ըղորդ «ուղիղ, ճիշտ» (=ուղիղ+որդ), զերդ||զեդ||զէրթ||դեթ «որպես, ինչպես» (=զի+արդ), դոր «որ», որտեղ» (=ընդ+որ), դունչ «բերանը և ծնոտը միասին» (=ընդ+ունչ), շաղայ (=ջր+աղ+այ), այլվի||ալվի||ալվա «կրկին» (=այլ+վայր), լման «լրիվ» (<ի լրման) և այլն:

4. Բաղադրությունը կարող է մթազնվել և իբրև նվազագույն նշան ընկալվել, երբ այն լեզվի որևէ փուլում արդեն ոչ գործուն քերականական կազմություն է. օրինակ՝ հաւց||հեւց||էւց||ոնց կազմությունները միջին հայերենում ծագում են հին հայերենի հոգնակի սեռական-տրականի այն-ց հոլովածեից՝ բառիմաստի փոփոխությամբ և բարբառային այլևայլ հնչյունափոխություններով (այ>ա, այ>է (ե), այ>ո), հասցէ կազմությունը արդի հայերենում՝ գրաբարի հասանել բայի ապառնի ժամանակի եզակի 3-րդ դեմքն է, գուցե՝ գրաբարի զո-մ բայի ապառնի ժամանակի եզակի 3-րդ դեմքն է, կեց-ցե՝ գրաբարի կեամ բայի ապառնի ժամանակի եզակի 3-րդ դեմքն է (այս բառը դիմային վերջավորություններ ստանալով, հանդես է գալիս նաև իբրև պակասավոր բայ՝ արտահայտելով ըղձական եղանակի իմաստ՝ կեցցեմ, կեցցես, կեցցես), ազնիվ՝ գրաբարի ազն բառի եզակի գործիականի մի ձև է և այլն:

Ինչպես տեսնում ենք, բառերի կառուցվածքային տարրերը լեզվի մեջ միատեսակ ընթացք չունեն և կարող են բազմապիսի փոփոխությունների ենթարկվել: Պատմական քերականության խնդիրն է քննել այդ միավորների զարգացման ընթացքը՝ որոշելով լեզվի առանձին փուլերում նրանց գերը, պարզելով, թե հաջորդական փուլերից ամեն մեկում նրանցից յուրաքանչյուրը ի՞նչ կերպ է ներկայանում՝ գիտակցվում է իբրև բաղադրիչ, թե՞ ոչ, ակտիվ է, թե՞ պասսիվ, գործուն է, թե՞ ոչ գործուն, էական միավոր է, թե՞ սոսկ ճեղքական և այլն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՆՐ—նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, հ. 1, 1837, հ. 2:

ՂՀՀ—Ղեոնդ Հովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Վիեննայ, 1897:

ՀԱԳ—XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, Երևան, 1938:

СТРУКТУРНЫЕ ЭЛЕМЕНТЫ СЛОВ С ТОЧКИ ЗРЕНИЯ ИСТОРИЧЕСКОЙ ГРАММАТИКИ

М. А. МУРАДЯН

Резюме

С точки зрения исторической грамматики, структурным элементам слов не свойствен единообразный курс. В последовательных временных этапах языка одни структурные элементы остаются без изменения, другие подвергаются им, т. е. сливаются с другими морфемами (образуя новые морфемы), теряют значение (превращаясь в формальные составные элементы), исчезают и т. д. Обычно такие изменения происходят не сразу, а постепенно, начиная с отдельных окружений знаковой системы того или иного языкового этапа.